Հավելված N 1
ՀՀ կառավարության 2023 թվականի
նոյեմբերի 30-ի N 2077 - Ն որոշման

Փորձաքննության ակտ* N _____

_____

Փորձաքննության ակտը տրամադրող

լիազոր մարմին (կազմակերպություն)

Փորձաքննության ակտը տրամադրող լիազոր մարմնի գտնվելու վայրը, հեռ. , էլ. փոստի հասցե

1. Հայտատու

Անվանումը _____

ՀՎՀՀ _____

Գրանցման հասցեն _____

2. Ապրանքի անվանումը

Անվանում	Ապրանքի ծածկագիրը (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ)	Ապրանքն արտադրված է

3. Ապրանք արտադրողը

Անվանումը _____

Արտադրական տարածքի գտնվելու վայրը _____

4. Եզրակացություն: Սույն ակտի երկրորդ կետում նշված ապրանքները համապատասխանում են պետական (մունիցիպալ) գնումների համար առանձին տեսակի ապրանքների ծագման երկրի կանոններին և ծագման երկիրը հանդիսանում է _____

(նշվում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունը)

_____

5. Ակտի ձևակերպման (գրանցման) ամսաթիվը

_____

6. Ակտի գործողության ժամկետը

_____

7. Փորձագետ(ներ)

_____ _____

(ստորագրություն) (փորձաքննության ակտը կազմողի անունը, ազգանունը, հայրանունը)

Փորձաքննության ակտը ___ էջով գրանցվել է

_____ կողմից

(փորձաքննության ակտը տրամադրող լիազոր մարմնի (կազմակերպության) անվանումը)

Կ. Տ

(հայտարարատու)

Հավելված
Փորձաքննության ակտ N____-ի

1. Փորձաքննության իրականացման հիմքը

_____

2. Ներկայացված փաստաթղթեր

_____

3. Փորձաքննությամբ հաստատվել է

_____

Փորձագետ(ներ)

_____ _____

(ստորագրություն) (փորձաքննության ակտը կազմողի անունը, ազգանունը, հայրանունը)

Կ. Տ

(հայտարարատու)

*Ծանոթագրություն:

1. Փորձաքննության ակտը լրացվում է հետևյալ կերպ.

1-ին՝ «Հայտատու» կետում նշվում է հայտատուի անունը: Իրավաբանական անձի դիմելու դեպքում նշվում են նրա լրիվ և կրճատ (առկայության դեպքում) անվանումը, կազմակերպաիրավական տեսակը: Անհատ ձեռնարկատիրոջ դիմումի դեպքում նշվում են նրա ազգանունը, անունը, հայրանունը, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթի տվյալները:

Նշվում է նաև հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), հաշվառման վայրի հասցեն, բնակության վայրը (անհատ ձեռնարկատերերի համար), հեռախոս, ֆաքս, էլ. հասցե:

2-րդ՝ «Ապրանքի անվանում» կետի առաջին սյունակում նշվում է ապրանքի նկարագրությունը՝ մանրամասն նշելով ապրանքանիշը, մոդելը և ապրանքի նույնականացման համար անհրաժեշտ այլ նշումներ: Երկրորդ սյունակում նշվում է Եվրասիական տնտեսական միության արտաքին տնեսական գործունեության ապրանքային անվանացանկին (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) համապատասխան ապրանքի ծածկագիրը: Երրորդ սյունակում նշվում են նախագծային և (կամ) տեխնիկական (տեխնոլոգիական) փաստաթղթերի անվանումներն ու մանրամասները, ինչպես նաև (եթե այդպիսիք կան) տեխնիկական կանոնակարգերը, ստանդարտները, որոնց համաձայն արտադրվել են ապրանքները:

3-րդ՝ «Ապրանք արտադրող» կետում նշվում է արտադրողի անվանումը, ինչպես նաև արտադրական տարածքի գտնվելու վայրը:
Իրավաբանական անձի դիմելու դեպքում նշվում են նրա լրիվ և կրճատ (առկայության դեպքում) անվանումը, կազմակերպաիրավական տեսակը: Անհատ ձեռնարկատիրոջ դիմումի դեպքում նշվում են նրա ազգանունը, անունը, հայրանունը:
4-րդ՝ «Եզրակացություն» կետում նշվում է, որ փորձաքննության ակտի 2-րդ կետում թվարկված ապրանքները համապատասխանում են պետական (մունիցիպալ) գնումների համար առանձին տեսակի ապրանքների ծագման երկրի որոշման կանոններին:

Ապրանքի փորձաքննության ակտը կազմելու դեպքում, որի վերաբերյալ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 2020 թվականի նոյեմբերի 23-ի N 105 որոշման N 1 հավելվածով (այսուհետ՝ N 1 հավելված) սահմանված են պայմաններ, արտադրական և տեխնոլոգիական գործողություններ, որոնց կատարումը գնահատվում է համապատասխան բալերով, 4-րդ կետում կատարվում է

հետևյալ գրառումը՝ «Փորձաքննության ակտի 2-րդ կետում նշված ապրանքի արտադրության ժամանակ իրականացվում են N 1 հավելվածով սահմանված պայմանները, արտադրական և տեխնոլոգիական գործողությունները՝ գնահատված բալերով»՝ նշելով բալերի ընդհանուր քանակը:

5-րդ՝ «Ակտի ձևակերպման (գրանցման) ամսաթիվը» կետում նշվում է փորձաքննության ակտի ձևակերպման ամսաթիվը:

6-րդ՝ «Ակտի գործողության ժամկետը» կետում նշվում է փորձաքննության ակտի գործողության ժամկետը (ներառյալ փորձաքննության ակտի ավարտի ժամկետը):

7-րդ՝ «Փորձագետ» կետում նշվում են այն փորձագետ(ներ)ը (լրիվ անուն(ներ)ը, պաշտոնը և կազմակերպության անվանումը, որի անունից ձևակերպվել է փորձաքննության ակտը), որոնք ուղղակիորեն ձևակերպել են փորձաքննության ակտը:

2. Փորձաքննության ակտին կցվում է N 1 հավելվածով նախատեսված արտադրական և տեխնոլոգիական գործողությունների պայմանների կատարման հիմնավորումը:

Հավելվածը լրացվում է հետևյալ կերպ.
1-ին՝ «Փորձաքննության իրականացման հիմքը» կետում նշվում են հայտի համարը և ամսաթիվը, որը լրացվում է համաձայն N 2 ձևի:

2-րդ՝ «Ներկայացված փաստաթղթեր» կետում թվարկում են հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերը փորձաքննության ակտը ստանալու համար՝ N 1 հավելվածով սահմանված պայմանների, արտադրական և տեխնոլոգիական գործողությունների կատարումը հաստատելու նպատակով:

3-րդ՝ «Փորձաքննությամբ հաստատվել է» կետում նշվում են այն պայմանները, արտադրական և տեխնոլոգիական գործառնությունները, որոնք իրականացվում են ապրանքների արտադրության ընթացքում՝ համաձայն N 1 հավելվածի:

Տրվում է մանրամասն տեղեկատվություն, որը հաստատում է ապրանքի համապատասխանությունը N 1 հավելվածով սահմանված պայմաններին, արտադրական և տեխնոլոգիական գործողություններին, որոնց կատարման ընթացքում ապրանքը համարվում է ծագած Հայաստանի Հանրապետությունից:

- տեղեկատվություն ապրանքների արտադրության մեջ օգտագործվող (ներգրավված) հիմնական միջոցների մասին,

- տվյալներ ապրանքների արտադրության մեջ ներգրավված անձնակազմի մասին,

- տեղեկատվություն ապրանքների արտադրության մեջ կատարված պայմանների, արտադրական և տեխնոլոգիական գործողությունների մասին:

Պետական (մունիցիպալ) գնումների համար առանձին տեսակի ապրանքների ծագման երկրի որոշման կանոններով նախատեսված դեպքերում նշվում է երրորդ երկրներից ծագած այն նյութերի նկարագրությունը, որոնք օգտագործվել են ապրանքների արտադրության մեջ՝ նշելով ծագման երկիրը և ադվալորային մասնաբաժնի հաշվարկը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

30.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ